ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 06 » հունիս 2025թ. No 3442 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/2576-25 առ 02.06.2025թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել թվով 3 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղդյանին՝

1)Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Recoverable Signature

X 

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի հունիսի « 06 » - ի N 3442- Ա հրամանի

# ԳՐԱՆՑՎԱԾ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Օքսիտոցին Գրինդեկս | օքսիտոցին | լուծույթ ներարկման | 5ՄՄ/մլ; (10/2x5/) ամպուլներ 1մլ բլիստերում | Գրինդեկս ԲԸ, Կրուստպիլս փ. 53, ԼՎ-1057, Ռիգա- բաց թողնման հսկող, ՀԲՄ Ֆարմա ս.ռ.օ., Սկլաբինսկա 30, 03680 Մարտին, Սլովակիա- բալք արտադրող, փաթեթավորող, որակի հսկող | Լատվիա | Գրինդեկս ԲԸ, Կրուստպիլս փ. 53, ԼՎ-1057, Ռիգա | Լատվիա | Դ | 23055 30.05.2025 |
| 2 | Ամբրօքսոլ | ամբրօքսոլ (ամբրօքսոլի հիդրոքլորիդ) | դեղահատեր | 30մգ; (20/2x10/) բլիստերում, (40/4x10/) բլիստերում | Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260 | Ռուսաստան | Թաթքիմֆարմպրեպարատի ԲԸ, 420091 Թաթարստանի Հանրապետություն, Կազան, Բելոմորսկայա փ. 260 | Ռուսաստան | ԱԴ | 23056 30.05.2025 |
| 3 | ՀՈՒՌՆՍ ԱՐՏԻԿԱՅԻՆ HCl Էպինեֆրինով Ինջ. 4% 1:100000 | արտիկային (արտիկային հիդրոքլորիդ), էպինեֆրին (էպինեֆրին բիտարտրատ) | լուծույթ ներարկման | 40մգ/մլ+0,01մգ/մլ; (50/5x10/) փամփուշտներ 1,7մլ պլաստիկե սկուտեղում | Հուոնս Կո., ՍՊԸ, 100, Բիովալեյ-ռո, Ջեչեոն-սի, Չհանգչեոնգբաք-դո | Կորեայի Հանրապետություն | Հուոնս Կո., ՍՊԸ, 8-րդ հարկ, Հուոնսգլոբալ շենք, Ա-դոնգ Պանգյո Ի-հրապարակ, 17 Չենջօպ-ռօ, 13449 Սուջեոնգ-գու, Սեոնգնամի-սի, Գյեոնգի-դօ | Կորեայի Հանրապետություն | Դ | 23057 30.05.2025 |